ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի սեպտեմբերի 12-ից 14-ը Թբիլիսի
գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Վարազդատ Կարապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Թբիլիսի (Վրաստան), 2017 թվականի սեպտեմբերի 12-ից 14-ը

4. Հրավիրող կողմը

Հայաստանում «Համայնքների ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» (ՀՀՏԶ) ծրագիր

5. Գործուղման նպատակը

Մասնակցել «Տեղական տնտեսական զարգացման» միջազգային 10-րդ համաժողովին:

6. Քննարկված թեմաները

Մասնակից երկրների պատվիրակները ներկայացրեցին վարչական և տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձը, համայնքների և քաղաքների կայուն կառավարման և տնտեսական զարգացման տեսլականները:

Քննարկվող թեմաների շարքում մասնավորապես ընդգրկված էին կայուն ապագայի, բնապահպանությանը, քաղաքային զբոսաշրջությանն ու համայնքների կայուն զարգացմանը վերաբերող քննարկումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ելույթները հիմնականում վերաբերում էին քաղաքային համայնքների զարգացման հաջողված փորձին, տուրիզմի զարգացման հեռանկարներին և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը: Քննարկվում էին նաև քաղաքային համայնքների և տարածքային համաչափ զարգացման մեթոդներ և մոդելներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում պայմանագրեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Գործողությունների ժամանակացույց չի մշակվել:

10. Գործուղվողը

Վարազդատ Կարապետյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

22 .09.2017թ.